



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 24(388) «13» դեկտեմբերի 2019թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	<b>ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ</b>	
543	«Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-118-Ն օրենքը	
544	«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-119-Ն օրենքը	
	<b>ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ</b>	
545	«Արցախի Հանրապետության Նախագահին առնթեր ներման հարցերի հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-142-Ն հրամանագիրը	
	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
546	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի N 284 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 978-Ն որոշումը	
547	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի N 719 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 981-Ն որոշումը	
548	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի N 285 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 982-Ն որոշումը	
549	«2020 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 985-Ն որոշումը	
550	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 29-ի N 478 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 986-Ն որոշումը	
551	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի N 21-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 987-Ն որոշումը	

552	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 18-ի N 605-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 992-Ն որոշումը	
553	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 998-Ն որոշումը	
554	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 999-Ն որոշումը	
555	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1000-Ն որոշումը	
556	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1001-Ն որոշումը	
557	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 1007-Ն որոշումը	
558	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1008-Ն որոշումը	
559	«Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 1014-Ն որոշումը	
560	«Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 1015-Ն որոշումը	
561	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի N 18 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1016-Ն որոշումը	
562	«Արցախի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման 2019 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ԱՀ կառավարության N 1017-Ն որոշումը	
563	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 97 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1019-Ն որոշումը	
564	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 176 որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1020-Ն որոշումը	
	<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>	

565	«Անհատ ձեռնարկատեր Արթուր Գասպարյանին տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 316-Ա հրամանը	
566	«Արթուր Գասպարյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 317-Ա հրամանը	
567	«ԼԻԼՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը դեղատնային գործունեություն իրականացնելու լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 318-Ա հրամանը	
568	«ԼԱԴ ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը դեղատնային գործունեություն իրականացնելու լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 319-Ա հրամանը	
569	«Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 322-Ա հրամանը	
570	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու և դրանց գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 222 հրամանը	
571	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու և դրանց գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 227 հրամանը	
572	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N128-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 11-Ն հրամանը	
573	«Փոստային վճարման պետական նշանի նմուշը սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 12-Ն հրամանը	
574	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 13-Ն հրամանը	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
նոյեմբերի 28-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական կառավարչական հիմնարկների մասին» 2002 թվականի հոկտեմբերի 30-ի ՀՕ-9 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից» բառերը փոխարինել «Քաղաքացիական օրենսգրքից» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի «պետական զինանշանի» բառերը փոխարինել «զինանշանի» բառով:

**Հոդված 3.** Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել:

**Հոդված 4.** Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «գերագույն դատարանի նախագահը» բառերը փոխարինել «դատարանների նախագահների խորհրդի նախագահը» բառերով, իսկ «կառավարության աշխատակազմի» բառերը հանել:

**Հոդված 5.** Օրենքի տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը՝ բոլոր հոլովաձևերով, փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-118-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2019 թվականի  
նոյեմբերի 28-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» 1999 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-58 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասի «Ժբ» կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասից «և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը» բառերը հանել:

**Հոդված 3.** Օրենքի տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը բոլոր հոլովաձևերով, փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

2019թ. դեկտեմբերի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-119-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՆԵՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ներման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը՝  
**որոշում եմ.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր  
ներման հարցերի հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Նախագահի 2009 թվականի ապրիլի 23-ի «Դատապարտյալների  
ներման խնդրագրերը քննարկելու կարգը հաստատելու մասին» ՆՀ-36-Ն  
հրամանագիրը:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապա-  
րակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

2019թ. նոյեմբերի 30  
Ստեփանակերտ  
ՆՀ-142-Ն

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳ  
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՆԵՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր ներման հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Ներման մասին» օրենքով և սույն աշխատակարգով:

**II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ**

3. Հանձնաժողովի գործառնությունը «Ներման մասին» օրենքով սահմանված կարգով ներկայացված ներման խնդրագրի քննարկելը և դրա վերաբերյալ Արցախի Հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելն է:

4. Հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի գործունեությանը մասնակցում են հասարակական հիմունքներով:

5. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքը.

2) վարում է հանձնաժողովի նիստերը.

3) հաստատում է հանձնաժողովի նիստի օրակարգը.

4) զեկուցում է հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը կամ դրանց զեկուցումը հանձնարարում է հանձնաժողովի քարտուղարին.

5) իրականացնում է հանձնաժողովի գործառնությանը և սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

6. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին.

2) ներկայացնում է առաջարկություններ՝ հանձնաժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) իրականացնում է հանձնաժողովի գործառնությանը և սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

**III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

7. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը դռնփակ են:

8. Հանձնաժողովը կարող է այցելել քրեակատարողական հիմնարկ և հանդիպել ներման խնդրագիր ներկայացրած դատապարտյալի հետ:

9. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

10. Սույն աշխատակարգի 9-րդ կետով նախատեսված դեպքում հանձնաժողովի նիստի օրակարգը ներկայացվում է հանձնաժողովի անդամներին՝ հրավիրվող նիստից ոչ ուշ, քան երկու օր առաջ:

11. Հանձնաժողովի նիստի օրակարգում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) քննարկվող յուրաքանչյուր հարցով զեկուցողի անունը, ազգանունը:

12. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի որոշմամբ՝ նրա անդամներից որևէ մեկը:

13. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի քննարկման ավարտից հետո հանձնաժողովում անցկացվում է քվեարկություն: Հանձնաժողովի անդամը առաջարկությանը քվեարկում է «կողմ» կամ «դեմ»: Հանձնաժողովի անդամների անհատական քվեարկությունները հրապարակման ենթակա չեն:

14. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը և արտահայտված դիրքորոշումները ենթակա չեն հրապարակման:

15. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Հանձնաժողովի նիստի արձանագրումն իրականացվում է համակարգչային եղանակով համառոտագրման կամ պարզ թղթային արձանագրման ձևով: Հանձնաժողովի նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը:

16. Առաջարկությունն ընդունվելուց հետո ներկայացվում է Արցախի Հանրապետության Նախագահին:

#### **IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

17. Հանձնաժողովն ընդունում է աշխատակարգային որոշումներ և առաջարկություններ:

18. Հանձնաժողովի աշխատակարգային որոշմամբ լուծվում են հանձնաժողովի գործունեության կազմակերպման հետ կապված հարցերը:

19. Հանձնաժողովի աշխատակարգային որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

20. Հանձնաժողովի առաջարկության հետ չհամաձայնվելու դեպքում հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք, որի վերաբերյալ նշում է կատարվում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ: Հատուկ կարծիքը ներկայացվում է հանձնաժողովի նիստից հետո երկօրյա ժամկետում, և կցվում հանձնաժողովի առաջարկությանը:

21. Հանձնաժողովի առաջարկություններն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է:

22. Հանձնաժողովի առաջարկությունը (ամփոփ առաջարկությունները) ստորագրում է հանձնաժողովի նիստը նախագահողը:

#### **V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

23. Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացնում է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի պետախրավական վարչությունը (այսուհետ՝ պետախրավական վարչություն):

24. Պետախրավական վարչությունը՝

1) ապահովում է հանձնաժողովի կազմակերպատեխնիկական աշխատանքների իրականացումը.

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրումը.

3) կատարում է հանձնաժողովի ընթացիկ գործունեության ապահովմանն ուղղված այլ գործողություններ:

**Արցախի Հանրապետության Նախագահի  
աշխատակազմի ղեկավար՝**

**Մ. ՄՈՒՄԱՅԵԼՅԱՆ**



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2019թ.

N 978-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 284 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի նշանակման և վճարման կարգն ու չափը սահմանելու մասին» N 284 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետում, որոշմամբ սահմանված հավելվածի վերնագրում, 1-ին կետում «պատվավոր կոչման» բառերը փոխարինել «և «վաստակավոր» պատվավոր կոչումների» բառերով.

2) որոշմամբ սահմանված հավելվածի՝

ա. 2-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պատվովճարը նշանակվում և վճարվում է՝ Արցախի Հանրապետության ժողովրդական արտիստ, Արցախի Հանրապետության ժողովրդական նկարիչ, Արցախի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, Արցախի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Արցախի Հանրապետության վաստակավոր արտիստ, Արցախի Հանրապետության վաստակավոր նկարիչ, Արցախի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Արցախի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, Արցախի Հանրապետության վաստակավոր ճարտարապետ, Արցախի Հանրապետության վաստակավոր լրագրող, Արցախի Հանրապետության վաստակավոր բժիշկ, Արցախի Հանրապետության վաստակավոր իրավաբան, Արցախի Հանրապետության տնտեսության վաստակավոր աշխատող, Արցախի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, վաստակավոր մարզիչ, ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող, Արցախի Հանրապետության վաստակավոր կուլեկտիվ պատվավոր կոչումների արժանացած անձանց (այսուհետ՝ պատվավոր կոչումների արժանացած անձինք):

Մույն կետում նշված՝ «վաստակավոր» պատվավոր կոչման արժանացած անձը պատվովճարի իրավունք ունի, եթե թոշակառու է (չի զբաղեցնում պետական և համայնքային պաշտոն կամ չի կատարում վճարովի այլ աշխատանք):»,

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց համար սահմանել ամենամսյա պատվովճար 40 000 ՀՀ դրամի չափով, իսկ «վաստա-

կավոր» պատվավոր կոչման արժանացած անձանց համար՝ 20 000 ՀՀ դրամի չափով:

Պատվավոր կոչումների արժանացած անձանց տրվող պատվովճարը սահմանվում է ցմահ:»,

գ. 4-5-րդ կետերում «դիմող» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «անձ» բառով և դրա հոլովաձևերով,

դ. 4-րդ կետի 1-ին պարբերությունում ««Ժողովրդական» պատվավոր կոչման» բառերը փոխարինել «Պատվավոր կոչումների» բառերով, «քաղաքացու» բառը՝ «անձի» բառով, «իսկ» բառից հետո լրացնել «Արցախի Հանրապետությունում» բառերը, «Տարածքային» բառից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն կետում նշված՝ Արցախի Հանրապետությունում հաշվառման վայր չունեցող անձը ներկայացնում է նաև փաստացի բնակության վայրի մասին տեղեկանք:»,

ե. 4-րդ կետի 1-ին և 3-րդ պարբերություններում ««Ժողովրդական» պատվավոր կոչումը» բառերը փոխարինել «պատվավոր կոչումը» բառերով,

զ. 4-րդ կետի 2-րդ պարբերությունում ««Ժողովրդական» պատվավոր կոչման» բառերը փոխարինել «պատվավոր կոչումների» բառերով,

է. լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետ.

«5.1. Մեկից ավելի պատվովճարի իրավունք ունեցող անձն ունի մեկ պատվովճար ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ:»,

ը. 9-րդ կետում ««Ժողովրդական» պատվավոր կոչում ունեցողների» բառերը փոխարինել «պատվավոր կոչումների արժանացած անձանց» բառերով,

թ. 11-րդ կետում «ճանաչվելու» բառից հետո լրացնել «,»վաստակավոր» պատվավոր կոչման արժանացած անձի պետական և համայնքային պաշտոն զբաղեցնելու կամ վճարովի այլ աշխատանք կատարելու» բառերը,

ժ. 12-րդ կետում «վերացվելուց» բառից հետո լրացնել «, պետական և համայնքային պաշտոնից կամ վճարովի այլ աշխատանքից ազատվելուց» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը «վաստակավոր» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճարը նշանակվում է 2020 թվականի հունվարի 1-ից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի N 284 որոշմամբ սահմանված կարգի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերն Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական գործակալության համապատասխան տարածքային բաժին մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ներկայացնելու դեպքում, իսկ այդ ժամկետից հետո ներկայացնելու դեպքում՝ փաստաթղթերը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 նոյեմբերի 2019թ.

N 981-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 719 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության մշակման և իրագործման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ և միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 719 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, որոշման նախաբանի «պետական» բառից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) որոշման վերնագրից հանել «ԵՎ ՄԻԶԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒԽԲ» բառերը.

3) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության մշակման և իրագործման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կազմը՝ համաձայն հավելվածի:».

4) որոշման 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

5) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2019 թվականի նոյեմբերի 26-ի N 981-Ն որոշման

«Հավելված  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարության 2008 թվականի  
հոկտեմբերի 28-ի N 719 որոշման

**Կ Ա Ձ Մ**

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ  
ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ**

Արցախի Հանրապետության պետական նախարար (խորհրդի նախագահ)  
Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման  
նախարար (խորհրդի նախագահի տեղակալ)  
Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար  
Արցախի Հանրապետության առողջապահության նախարար  
Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար  
Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների  
նախարար  
Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարար  
Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի  
կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ  
Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահ  
(համաձայնությամբ)  
Արցախի Հանրապետության Ազգային ժողովի սոցիալական և առողջապահության  
հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)  
Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցության ղեկավար  
(համաձայնությամբ)»:

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 նոյեմբերի 2019թ.

N 982-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 285 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 285 որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) նախաբանում, 3-րդ կետի «Սահմանադրության» բառից առաջ, 5-6-րդ, 16-17-րդ, 27-րդ, 49-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) 3-րդ կետում «օրենքի» բառից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը.

3) 16-րդ կետի 2-րդ պարբերությունում «2 հազ. դրամ» բառերը փոխարինել «4 000 ՀՀ դրամ» բառերով, իսկ «3 հազ. դրամ» բառերը՝ «5 000 ՀՀ դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2019թ.

N 985-Ն

ք. Ստեփանակերտ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉՐ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Արցախի Հանրապետության Նախագահի 2019 թվականի նոյեմբերի 21-ի «2020 թվականի ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ՆՀ-136-Ն հրամանագրի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո Ր ո Չ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության 2020 թվականի ձմեռային զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու նպատակով ստեղծել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի և շրջանների (Ստեփանակերտ քաղաքի) զորակոչային հանձնաժողովներ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել հանրապետական զորակոչային հանձնաժողովին կից բժշկական հանձնախմբի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, Ստեփանակերտի քաղաքապետին՝

1) Ստեփանակերտ քաղաքի և շրջանների զորակոչային հանձնաժողովների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը հանձնարարել հանրապետական զորակոչային հանձնաժողովի նախագահին:

4. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) ձմեռային զորակոչն անցկացնել սահմանված կարգով՝ 2020 թվականի հունվար ամսին.

2) զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիներին վերաբերող նյութերն ուղարկել Արցախի Հանրապետության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ.

3) ապահովել Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատների կողմից զորակոչիկների սահմանված կարգով ներկայացումը կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ՝ կանխարգելիչ պատվաստումներ ստանալու համար՝ առնվազն մեկ ամիս առաջ մինչև զորակոչը:

5. Առաջարկել Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին՝ զորակոչից խուսափող Արցախի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև այդ բնույթի գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը վերցնել անմիջական վերահսկողության տակ:

6. Արցախի Հանրապետության նախարարությունների, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին՝

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակները ստանալուց հետո ապահովել նրանց նկատմամբ աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին:

2) իրավասության սահմաններում ապահովել Արցախի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ:

7. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին՝

1) ձևեռային զորակոչի անցկացման համար զինվորական կոմիսարիատներն ապահովել զորակոչային տեղամասերով, սպասարկող անձնակազմերով, ինչպես նաև նյութական և ավտոտրանսպորտային միջոցներով:

2) զինվորական կոմիսարների ներկայացմամբ հաստատել տարածքային զորակոչային հանձնաժողովների կազմերը (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների)՝ դրանցում ընդգրկելով վարչատարածքային միավորի սահմաններում գործող բժշկական հաստատությունների առաջատար բժիշկ-մասնագետներին, իսկ Ստեփանակերտում, անհրաժեշտության դեպքում, նաև՝ հանրապետական ենթակայության բժշկական հաստատությունների բժիշկ-մասնագետներին:

8. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացրած հայտով կազմակերպել ֆյուրո (ռենտգեն) գնում, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութերով և ֆյուրո (ռենտգեն) ժապավեններով:

9. Արցախի Հանրապետության ոստիկանության պետին՝

1) ապահովել զորակոչիկների անվտանգ փոխադրումը և հասարակական կարգի պահպանումը Արցախի Հանրապետության զորակոչային տեղամասերում:

2) ապահովել Արցախի Հանրապետության տարածքում և Արցախի Հանրապետության տարածքից դուրս՝ զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումն ու նրանց ներկայանալը զորակոչային տեղամասեր:

3) զորակոչի ընթացքում զորակոչիկներին Ստեփանակերտի սահմաններից դուրս փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար հանրապետական հավաքակայանին կցել Ճանապարհային ոստիկանության համապատասխան անձնակազմ:

10. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին՝ ապահովել զորակոչիկների փոխադրումը զինվորական կոմիսարիատներից հանրապետական հավաքակայան՝ ըստ զինվորական կոմիսարիատների ներկայացրած հայտերի:

11. Մահմանել, որ զորակոչի կազմակերպման ծախսերը փոխհատուցվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության միջոցների հաշվին՝ բացառությամբ սույն որոշման 8-րդ կետով կատարվող ծախսերի:

12. Արցախի Հանրապետության ոստիկանության պետին, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ զորակոչից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով ձմեռային զորակոչի ընթացքում ուժեղացնել վերահսկողությունը Արցախի Հանրապետության սահմանային հաղորդակցության ուղիներում, զորակոչային տարիքի Արցախի Հանրապետության քաղաքացիների Արցախի Հանրապետությունից մեկնումը թույլատրել միայն զինվորական գրքույկներում ժամկետային զինվորական ծառայությունն ավարտելու կամ հիվանդության պատճառով պահեստագործում գտնվելու, իսկ ամրակցման (նախնական հաշվառման) վկայականներում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից օգտվելու մասին զինվորական կոմիսարիատների համապատասխան նշումների առկայության դեպքում:

13. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին և հանրապետական զորակոչային հանձնաժողովին:

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**



**Կ Ա Ջ Մ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Մխիթար Էդուարդի Ավչառյան	- Արցախի Հանրապետության զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
Սամվել Կառլենի Մելքունյան	- «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության վիրաբուժական բաժանմունքի պետ, հանձնաժողովի անդամ
Դավիթ Ռոբերտի Արզումանյան	- Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի անդամ
Սասուն Վաչագանի Գաբրիելյան	- Արցախի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Գագիկ Յուրիի Հարությունյան	- Արցախի Հանրապետության ոստիկանության հասարակական կարգի ապահովման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Էրիկ Արտյոմի Ծատրյան	- Արցախի Հանրապետության զինվորական կոմիսարիատի գորակոչի բաժանմունքի պետ, հանձնաժողովի քարտուղար

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**Կ Ա Ջ Մ**

**ՇՐՋԱՆՆԵՐԻ (ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ) ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ**

**ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

- |                            |  |
|----------------------------|--|
| Գրիգորի Այոռաչյի Գասպարյան | - Ստեփանակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ  |
| Զորեն Սերգեյի Ղազարյան     | - Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Վաղիմ Վյաչեսլավի Հովսեփյան | - Ստեփանակերտ քաղաքի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ  |
| Վահրամ Ռաֆայելի Բալայան    | - Ստեփանակերտ քաղաքի ոստիկանության վարչության ԱԳԲ պետ, հանձնաժողովի անդամ  |

**ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

- |                          |  |
|--------------------------|--|
| Դավիթ Բորիսի Սախյան      | - Շուշիի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ                    |
| Սարգիս Մամիկոնի Գալստյան | - Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ      |
| Արտուր Սերգեյի Սարգսյան  | - Շուշիի շրջանի դատախազության դատախազ, հանձնաժողովի անդամ            |
| Միքայել Յուրիի Ավանեսյան | - Շուշիի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ |

**ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

- |                           |  |
|---------------------------|--|
| Անդրեյ Վալերիի Ներսեսյան  | - Հադրութի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ                    |
| Նվեր Վազգենի Գրիգորյան    | - Հադրութի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ      |
| Գագիկ Սերգեյի Իշխանյան    | - Հադրութի շրջանի դատախազ, հանձնաժողովի անդամ                          |
| Արմեն Լյովայի Բաղդասարյան | - Հադրութի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ |

**ՄԱՐՏՈՒՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

- Արսեն Վաղարշակի Աղաբեկյան - Մարտունու զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
- Վիլեն Անդրեյի Ալավերդյան - Մարտունու շրջանի վարչակազմի ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ-իրավախորհրդատու, հանձնաժողովի անդամ
- Հովիկ Ռոդիկի Մկրտչյան - Մարտունու շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ
- Լեոնիկ Գավրուշայի Աբրահամյան - Մարտունու շրջանի ոստիկանության բաժնի ավագ հետաքննիչ, հանձնաժողովի անդամ

**ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

- Արծվիկ Անդրանիկի Գաբրիելյան - Ասկերանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
- Վլադիմիր Միքայելի Բալասանյան - Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
- Աշոտ Յուրիի Ղուլյան - Ասկերանի շրջանի դատախազության ավագ դատախազ, հանձնաժողովի անդամ
- Նվեր Սլավայի Մելքումյան - Ասկերանի շրջանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

**ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

- Արմեն Մադաթի Շիրինյան - Մարտակերտի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
- Նվեր Ռոբիկի Սախյան - Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ
- Վահրամ Ալբերտի Ավանեսյան - Մարտակերտի շրջանի դատախազության դատախազ, հանձնաժողովի անդամ
- Հարություն Արարատի Սահակյան - Մարտակերտի շրջանի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, հանձնաժողովի անդամ

**ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

- Մխիթար Միշայի Ավանեսյան - Շահումյանի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ
- Կարեն Ալբերտի Եղիշյան - Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի անդամ

- Դավիթ Վլադիմիրի Ստեփանյան - Շահումյանի շրջանի դատախազ,  
հանձնաժողովի անդամ
- Նարեկ Ռուսլանի Սաղիյան - Շահումյանի շրջանի ոստիկանության բաժնի  
պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

**ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

- Ստեփան Յուրիկի Օհանջանյան - Քաշաթաղի զինվորական կոմիսար,  
հանձնաժողովի նախագահ
- Հովհաննես Ադամի Սահակյան - Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավարի  
տեղակալ, հանձնաժողովի անդամ
- Իգոր Իսմաիլի Ալավերդյան - Քաշաթաղի շրջանի դատախազության ավագ  
դատախազ, հանձնաժողովի անդամ
- Արմեն Լյովայի Բալիկյան - Քաշաթաղի շրջանի ոստիկանության բաժնի  
պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**Կ Ա Ջ Մ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ  
ԿԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ**

Կարինե Էդուարդի Բաղյան	- թերապևտ
Հակոբ Գրիշայի Հակոբյան	- հոգեբույժ
Սրբուհի Ռոմիկի Բաղդասարյան	- նյարդաբան
Անժելա Շահենի Դանիելյան	- քիթ-կոկորդ-ականջաբան
Էդվարդ Ռաֆայելի Ստեփանյան	- վիրաբույժ
Սևակ Էմիրջանի Ասլանյան	- ակնաբույժ
Լեոնիդ Եղիշեի Համբարձումյան	- մաշկաբան
Ինեսա Միքայելի Ադամյան	- սրտաբան
Կարեն Դմիտրիի Դավթյան	- վնասվածքաբան
Աիդա Երեմի Հարությունյան	- ատամնաբույժ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2019թ.

N 986-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 478 ՈՐՈՇՈՒՄՆ  
ՈՒՃԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 29-ի «Պետության կարիքների համար կնքվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնման պայմանագրերով նախատեսվող կանխավճարի առավելագույն չափը սահմանելու մասին» N 478 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2019թ.

N 987-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2019 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 21-Ն որոշման հավելվածի 132-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2019թ.

N 992-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 605-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 18-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում զինվորական ծառայություն անցնող զինծառայողների կողմից բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման մասին» N 605-Ն որոշմամբ սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 2-րդ կետում «59703, 38401, 36534, 35383, 34153, 49971, 33651, 38862 գորամասերում» բառերը փոխարինել «շարքերում» բառով.

2) 5-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում՝

«32000» թիվը փոխարինել «20000» թվով, իսկ «33000» թիվը փոխարինել «22000» թվով,

բ. 2-րդ ենթակետից հանել՝ «և բնակավայրերում» բառերը, իսկ «17000» թիվը փոխարինել «5000» թվով, «23000» թիվը փոխարինել «7000» թվով,

գ. 2-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ ենթակետ՝

«3) այլ բնակավայրերում՝

ա. չորս և ավելի անձից բաղկացած զինծառայողի ընտանիքին՝ 14500 ՀՀ դրամ,

բ. երկու և երեք անձից բաղկացած զինծառայողի ընտանիքին՝ 18000 ՀՀ դրամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2 դեկտեմբերի 2019թ.

N 998-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 629 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Գետավանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1035 հեկտար արտավայրը և պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,0965 հեկտար թփուտները փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2 դեկտեմբերի 2019թ.

N 999-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 629 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Գետավանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,65 հեկտար և 0,75 հեկտար թփուտները փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2 դեկտեմբերի 2019թ.

N 1000-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 629 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Սարտակերտի շրջանի Գետավանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2 հեկտար և 0,2 հեկտար արոտավայրերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2 դեկտեմբերի 2019թ.

N 1001-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 629 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Սարտակերտի շրջանի Գետավանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0838 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 դեկտեմբերի 2019թ.

N 1007-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս, շրջանի վարչական սահմաններում գտնվող «ՏՐՏՈՒ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ 1,715 հեկտար, 0,8289 հեկտար և 0,12 հեկտար արոտավայրերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

9 դեկտեմբերի 2019թ.

N 1008-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1135-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2019 թվականի դեկտեմբերի 9-ի N 1008-Ն որոշման

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ  
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ  
28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ. դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ այդ թվում՝</b>	-	-	-	-
07			<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>	-	-	-	-
	1		Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	-	-	-	(47000.0)
	1		Դեղագործական ապրանքներ	-	-	-	(47000.0)
		01	Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում	-	-	-	(47000.0)
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	(47000.0)
	6		Առողջապահության (այլ դասերին չպատկանող)	-	-	-	47000.0
	1		Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	-	-	-	47000.0
		04	Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ծախսերի փոխհատուցում	-	-	-	47000.0
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	47000.0

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019թ.

N 1014-Ն

ք. Ստեփանակերտ

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՅՈՒՆ  
ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ  
ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ԵՎ ՏՐՎԱԾ ՏԱՐԿԵՏՈՒՄԸ ԴԱԴԱՐԵԼՈՒ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո ղ ու մ է.**

1. Մահմանել՝

1) Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիներին նպատակային ուսումնառության համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող Արցախի Հանրապետության քաղաքացիներին նպատակային ուսումնառության համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ գնահատման և թեստավորման կենտրոն) հետ համատեղ մշակել ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքելու դիմում ներկայացրած քաղաքացիների ընտրության թեստերը՝ դրանց նմուշները հրապարակելով Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում և լրատվամիջոցներով:



2) մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը ապահովել տվյալ ուսումնական տարվա շրջանակներում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության համար անհրաժեշտ՝ ըստ զինվորական մասնագիտացումների կրտսեր սպայական կազմի պաշտոնների համալրման նպատակով պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ ընդունելության տեղերի թվի ներկայացնելը Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն, ինչպես նաև դրա հրապարակումը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում և լրատվամիջոցներով:

3. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարին՝

1) ապահովել յուրաքանչյուր ուսումնական տարվա շրջանակներում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված ընդունելության տեղերի ներառումը Արցախի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ ընդունելության տեղերի ընդհանուր թվում:

2) մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ը կամ դեկտեմբերի 15-ը ապահովել Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող այն քաղաքացիների անվանացուցակի ներկայացնելը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարություն, ովքեր 18 տարին լրանալու օրվա դրությամբ չեն ավարտել հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառությունը և հայտարարված համապատասխան գորակոչի շրջանակներում ենթակա են պարտադիր զինվորական ծառայության գորակոչի:

4. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿԱՍ ԴԻՊԼՈՄԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏԻ  
ԿԱՍ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ՍՈՎՈՐՈՂ ԵՎ  
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ  
ՈՒՍՈՒՄՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԱՐՑԱՒԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՇՎԱԾ  
ՎԱՅՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ  
ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ԵՎ ՏՐՎԱԾ  
ՏԱՐԿԵՏՈՒՄԸ ԴԱՂԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Սույն պայմաններով կարգավորվում են Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող (կամ դիմորդ հանդիսացող) և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու, ինչպես նաև տրված տարկետումը դադարելու հետ կապված հարաբերությունները:

2. Օրենքով սահմանված կարգով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա և Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող (կամ սովյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսացող) քաղաքացի (այսուհետ՝ քաղաքացի) ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու ցանկություն ունենալու դեպքում կարող է գորակոչի նախապատրաստական փուլի ժամանակ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը դիմում (ձև N 1) ներկայացնել իր զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Դիմումին կից ներկայացվում են քաղաքացու անձը և Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորելու (կամ սովյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսանալու) հանգամանքը հաստատող փաստաթղթերի պատճենները, գնահատման և թեստավորման կենտրոնի համապատասխան հաշվի համարին փոխանցված 1500 դրամ վճարի անդորրագիրը: Ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը սահմանված կարգով հաշվառվում են հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատում և դրա վերաբերյալ քաղաքացուն

տրվում է ստացական: Սույն կետում նախատեսված ժամկետից հետո ներկայացված դիմումները ենթակա չեն ընթացքավորման և մերժվում են՝ մերժման գրությունում նշելով մերժման հիմքը: Դիմում ներկայացրած քաղաքացիների առողջական վիճակի փորձաքննությունն իրականացվում է ռազմաուսումնական հաստատությունների դիմորդների համար սահմանած կարգով: Առողջական վիճակի պատճառով ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու համար ոչ պիտանի ճանաչվելու, ինչպես նաև ուսումնառությունը 26 տարին լրանալուց հետո ավարտելու կամ սույն պայմանների 12-րդ կետում նախատեսված դեպքերում քաղաքացու դիմումը հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից մերժվում է՝ նշելով մերժման հիմքը:

3. Ներկայացված դիմումների հիման վրա և քաղաքացիների առողջական վիճակի փորձաքննության արդյունքներով զինվորական կոմիսարիատի կողմից կազմվում է հաշվառված անձանց անվանացուցակ (ձև N 2), որը ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունիսի 10-ը ներկայացվում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանում: Անվանացուցակի հետ ներկայացվում են նաև քաղաքացու դիմումն ու կից փաստաթղթերը:

4. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանումը զինվորական կոմիսարիատներից ստացված անվանացուցակների հիման վրա կազմում է դիմում ներկայացրած քաղաքացիների ամփոփ անվանացուցակները և մինչև տվյալ տարվա հունիսի 15-ը ներկայացնում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ դիմում ներկայացրած քաղաքացիների ընտրության թեստավորումն իրականացնելու համար:

5. Յուրաքանչյուր ուսումնական տարվա շրջանակներում գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից թեստավորումն անցկացվում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված՝ ըստ զինվորական մասնագիտացումների կրտսեր սպայական կազմի պաշտոնների համալրման համար անհրաժեշտ ընդունելության տեղերի թվի շրջանակներում: Թեստավորումն անցկացվում է հետևյալ զինվորական մասնագիտական պատրաստություն անցնելու հիմքով՝

1) դասակի հրամանատարների պաշտոնների համալրման պատրաստություն՝ ուսումնառության ավարտից և պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց հետո 3 ամիս ժամկետով շարքային կազմի պարտադիր զինծառայողի կարգավիճակով պատրաստություն և 2 տարի ժամկետով կրտսեր սպայական կազմի պայմանագրային ծառայություն անցնելու համար:

2) բժշկական մասնագիտացում պահանջող պաշտոնների համալրման պատրաստություն՝ ուսումնառության ավարտից և պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց հետո 1 տարի ժամկետով կլինիկական ռեզիդենտուրայում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով ուսումնառություն և հետուսումնական 4 տարի ժամկետով կրտսեր սպայական կազմի պայմանագրային ծառայություն անցնելու համար:

6. Թեստավորումն անցկացվում է թեստային առաջադրանքների կատարման ձևով՝ սույն պայմանների 5-րդ կետի 1-ին ենթակետի շրջանակներում՝ ընդհանուր զարգացվածության աստիճանը, իսկ 2-րդ ենթակետի շրջանակներում՝ մասնագիտական առարկայական (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) գիտելիքները որոշող՝ յուրաքանչյուրն 80 առաջադրանքից բաղկացած համակցված թեստերի լրացման միջոցով: Թեստավորումն անցկացվում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից սահմանված օրերին և թեստավորման կենտրոններում: Թեստավորման անցկացման շրջանակներում՝

1) գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով նշանակվում են թեստավորման կենտրոնի ղեկավար և գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչներ: Թեստավորման կենտրոնի քննասենյակներում թեստավորումն

անցկացնելիս կարող են ներկա լինել միայն թեստավորման կենտրոնի ղեկավարը և գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչները.

2) թեստավորման անցկացման ընթացքում քաղաքացիներին արգելվում է այլ քաղաքացիների հետ խոսելը, առանց կենտրոնի ղեկավարի թույլտվության տեղը փոխելը, թեստերը և պատասխանների ձևաթղթերը փոխանակելը, արտագրելը, բջջային հեռախոսներ կամ այլ կապի միջոցներ քննասենյակ բերելը.

3) թեստավորման անցկացման ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերն ու պատասխանների ձևաթղթերը փոխարինվում են նորերով՝ արձանագրելով այդ փաստը: Թերություններ ունեցող պատասխանների ձևաթղթերի և թեստերի վրա գրվում է «Խոտանված է».

4) քննասենյակում թեստի բովանդակության վերաբերյալ քաղաքացիների հարցերը չեն քննարկվում.

5) գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչն իրավունք ունի թեստավորման ընթացքում մեկ անգամ նախազգուշացնելու քաղաքացուն, արձանագրելու նախազգուշացումը, կրկնվելու դեպքում՝ հեռացնելու թեստավորումից, եթե նա առանց թույլտվության թեստավորման ընթացքում դուրս է եկել քննասենյակից, խոսել է այլ քաղաքացիների հետ, փոխել է տեղը: Եթե թեստավորման ընթացքում քաղաքացին արտագրել է կամ նրա մոտ հայտնաբերվել է բջջային հեռախոս կամ այլ կապի միջոց, ապա նա հեռացվում է: Հեռացվող քաղաքացուց վերցվում է թեստը, պատասխանների ձևաթղթի վրա գրվում է «Հեռացված է թեստավորումից», սլյակ խմբի և քննասենյակի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվողի անունը, ազգանունը, հեռացման պատճառը.

6) թեստավորման տևողությունը 150 րոպե է: Թեստավորման ավարտից 20 րոպե առաջ քննասենյակի գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը քաղաքացիների ուշադրությունն է հրավիրում ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները թեստերից պատասխանների ձևաթղթերում անցկացնելու մասին.

7) թեստավորումն ավարտած քաղաքացու ձևաթուղթը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը պատճենահանում է, այնուհետև քաղաքացին թեստը և ձևաթուղթը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչին է հանձնում՝ ստորագրելով քաղաքացիների ցուցակի համապատասխան սյունակում: Քաղաքացին ձևաթղթի պատճենահանված օրինակը պահում է իր մոտ.

8) թեստը չի ստուգվում և չի գնահատվում, ստուգվում և գնահատվում է միայն ձևաթուղթը՝ էլեկտրոնային եղանակով՝ 20-միավորանոց համակարգով և հարյուրերորդական մասի պահպանմամբ.

9) թեստավորման ձևաթղթերի ստուգումը, արդյունքների բողոքարկման քննարկումը և հրապարակումն իրականացնում է գնահատման և թեստավորման կենտրոնը.

10) թեստավորման արդյունքները հրապարակվում են թեստավորումից հետո երրորդ օրը.

11) թեստավորման արդյունքի հետ անհամաձայնության դեպքում քաղաքացին արդյունքների հրապարակման հաջորդ օրը ժամը 9:00-18:00 կարող է բողոքարկել այն թեստավորման կենտրոնում, որտեղ կազմակերպվել է թեստավորումը.

12) թեստավորման արդյունքների բողոքարկման համար գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով ստեղծվում է բողոքարկման հանձնաժողով, որը քվեարկությամբ որոշում է կայացնում թեստավորման արդյունքի բարձրացման կամ իջեցման կամ նույնը թողնելու մասին:

7. Թեստավորման արդյունքներով հաղթող են ճանաչվում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված անհրաժեշտ տեղերի թվի շրջանակներում՝ առավելագույն միավորից նվազման կարգով մինչև անհրաժեշտ թիվը լրանալը, համապատասխան միավորներ հավաքած այն քաղաքացիները, որոնց միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է

տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում սահմանված ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 70 տոկոսը կամ ովքեր հավաքել են տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության համար սահմանված ընդունելության քննությունների առավելագույն դրական միավորների հանրագումարի առնվազն 75 տոկոսը, ինչպես նաև միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի գնահատականներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված այն քաղաքացիները, ովքեր հավաքել են ընդհանուր զարգացվածության աստիճանը որոշող թեստի առավելագույն արժեքի առնվազն 75 տոկոսը: Ընդ որում, անկախ թեստավորման արդյունքներից, հաղթող ճանաչվելու առաջնահերթությունը տրվում է համապատասխան միջին որակական գնահատական ունեցող քաղաքացիներին: Թեստավորման արդյունքներով գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից կազմվում են թեստավորմանը մասնակցած և հաղթող ճանաչված ու հաղթող չճանաչված քաղաքացիների, ինչպես նաև թեստավորմանը չմասնակցած քաղաքացիների անվանացուցակներ թեստավորմանը մասնակցած քաղաքացիների անվանացուցակում նշելով յուրաքանչյուր քաղաքացու թեստավորման արդյունքները, ՄՈԳ-ի և(կամ) ընդունելության (մրցութային) քննություններից հավաքած միավորների տոկոսները, որոնք մինչև տվյալ տարվա հուլիսի 15-ը ներկայացվում են Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարություն: Թեստավորման արդյունքներով հաղթող չճանաչված և (կամ) թեստավորմանը չմասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանման կողմից ուղարկվում է քաղաքացիների հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ՝ այդ քաղաքացիների գորակոչն օրենքով սահմանված կարգով իրականացնելու համար:

8. Թեստավորման արդյունքներով հաղթող ճանաչված քաղաքացու և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության միջև կնքվում է ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր (ձև N 3): Եթե սույն պայմանների 5-րդ կետում նշված համապատասխան պատրաստության շրջանակներում իրականացված թեստավորման արդյունքներով առավելագույն միավորից նվազման կարգով վերջին տեղի համար առկա են հաղթող ճանաչված (հավասար միավորներ հավաքած) մեկից ավելի քաղաքացիներ, ապա Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից իրականացվում է նշված քաղաքացիների վիճակահանություն, որի արդյունքներով պայմանագիր չկնքվող քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանման կողմից ուղարկվում է քաղաքացու հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ՝ այդ քաղաքացու (քաղաքացիների) գորակոչն օրենքով սահմանված կարգով իրականացնելու համար:

9. Պայմանագիր կնքած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանման կողմից ուղարկվում է համապատասխան զինվորական կոմիսարիատներ՝ քաղաքացիների տարկետումն օրենքով սահմանված կարգով ձևակերպելու համար: Պայմանագիր կնքած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացվում է նաև Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում այդ քաղաքացիների մասով պետական պատվեր տեղադրելու համար: Պայմանագիր կնքած քաղաքացիների ուսումնառությունը բարձրագույն

ուսումնական հաստատություններում իրականացվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ, բարձրագույն ուսումնական հաստատության կողմից համապատասխան մասնագիտության համար սահմանված տարեկան վարձի չափով: Սույն կետի համաձայն ստացված տեղեկատվության հիման վրա համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության և քաղաքացու միջև օրենքով սահմանված կարգով կնքվող ուսումնառության պայմանագրում պարտադիր նշվում է քաղաքացու ուսումնառությունը սույն կարգի և պայմանների համաձայն իրականացվելու վերաբերյալ՝ ներառյալ սույն պայմանների 13-րդ կետում նախատեսված դրույթները: Եթե մինչև սույն կետի համաձայն ստացված տեղեկատվությունը համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության և քաղաքացու միջև արդեն իսկ կնքված է ուսումնառության պայմանագիր, ապա պայմանագրում կատարվում են սույն կետում նշված փոփոխությունները և լրացումները:

10. Զինվորական կոմիսարիատները պայմանագիր կնքած քաղաքացիների տարկետումը ձևակերպում են օրենքով սահմանված կարգով՝ համապատասխան ուսումնական հաստատության կողմից քաղաքացու ուսումնառության ժամկետի վերաբերյալ տրված տեղեկանքի հիման վրա:

11. Տրված տարկետման ժամկետի ընթացքում տարկետման իրավունքը դադարում է քաղաքացու կողմից՝

1) իր հետ կնքած պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դիմում ներկայացվելիս.

2) բարձրագույն ուսումնական հաստատությունից կամ զինվորական պատրաստությունից անկախ պատճառներից ազատվելիս և (կամ) հեռացվելիս: Սույն ենթակետի իմաստով բարձրագույն ուսումնական հաստատությունից ազատում է համարվում նաև քաղաքացուն տրված ակադեմիական արձակուրդը և (կամ) առկա ուսուցման ձևը փոխելը:

12. Քաղաքացուն բարձրագույն ուսումնական հաստատությունից ազատելու և (կամ) հեռացնելու մասին հրամանը՝ դրա տալու օրվանից հետո ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ներկայացվում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարություն և քաղաքացու զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Իր հետ կնքած պայմանագիրը լուծելու դիմում ներկայացնելու կամ քաղաքացուն բարձրագույն ուսումնական հաստատությունից կամ զինվորական պատրաստությունից ազատելու և (կամ) հեռացնելու հիման վրա քաղաքացու հետ կնքված պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվում է, որի մասին տեղեկատվությունը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանման կողմից ուղարկվում է քաղաքացու զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ, ինչպես նաև Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն և համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն: Սույն պայմանների 11-րդ կետի համաձայն տարկետման իրավունքը դադարած քաղաքացուն հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից տրվում է ծանուցագիր՝ հայտարարված գորակոչի շրջանակներում գորակոչին մասնակցելու վերաբերյալ: Սույն պայմանների 11-րդ կետում նախատեսված դեպքերում տարկետման իրավունքը դադարած քաղաքացուն սույն պայմանների համաձայն կրկին անգամ տարկետում չի տրվում:

13. Սույն պայմանների 12-րդ կետի համաձայն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվելու դեպքում քաղաքացիները, պայմանագրում նախատեսված ժամկետում, բարձրագույն ուսումնական հաստատությանը միանվագ վճարում են այդ հաստատության վճարովի համակարգում տվյալ մասնագիտության գծով ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի կրկնապատիկը (այսուհետ՝ հրաժարագին), որի հաշվարկը քաղաքացուն ներկայացնում է համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունը: Պայմանագրում նախատեսված ժամկետում քաղաքացու կողմից հրաժարագինը

չվճարվելու դեպքում դրա բռնագանձումն իրականացվում է դատական կարգով՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության կողմից: Սույն կետում սահմանված գործընթացի նկատմամբ հսկողությունն իրականացվում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից: Սույն կետում սահմանված հրաժարագինը վճարելու պարտավորությունը չի կարող ծագել քաղաքացու՝ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու և (կամ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրվման դատապարտվելու հիման վրա պատիժ կրելու պատճառով պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքերում:

14. Քաղաքացու կողմից համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությանը վճարված հրաժարագինի 50 տոկոսը բարձրագույն ուսումնական հաստատությունը վերադարձնում է Արցախի Հանրապետության պետական բյուջե, 10 տոկոսը փոխանցում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության արտաբյուջետային հաշվին, իսկ 40 տոկոսը տնօրինում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

(զինվորական կոմիսարի կոչումը, անունը, ազգանունը)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Հայտնում եմ Ձեզ, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի դրույթների համաձայն նպատակային ուսումնառության համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու նպատակով ցանկություն ունեմ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքելու ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր:

Կից ներկայացնում եմ անձը հաստատող և սովորելու (կամ դիմորդ հանդիսանալու) հանգամանքը հաստատող փաստաթղթերի պատճեններն ու գնահատման և թեստավորման կենտրոնի հաշվի համարին փոխանցված վճարի անդորրագիրը:

Դիմող \_\_\_\_\_  
(ազգանունը, անունը, հայրանունը)

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թ.

**Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ**

**ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԱՐՑԱԽԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ  
ՆՇՎԱԾ ՎԱՅՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԱՆՑՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ**

NN ը/կ	Քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	Զինվո- րական կոմի- սարիատը	Դիմումը ներկայաց- նելու օրը, ամիսը, տարեթիվը	Բարձրագույն ուսումնական հաստատությունը, ֆակուլտետը, կուրսը, մասնա- գիտացումը	Պիտանիություն- նը զինվորական ծառայության համար



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N \_\_\_\_\_

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼՇՎԱԾ ՎԱՅՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Ստեփանակերտ \_\_\_\_\_ 20 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ԱՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս \_\_\_\_\_  
(պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ -ի

(այսուհետ նախարարություն), մի կողմից, և քաղաքացի \_\_\_\_\_  
(անունը, հայրանունը, ազգանունը)

\_\_\_\_\_ -ը

անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տալու ամսաթիվը և մարմինը)

(այսուհետ՝ քաղաքացի (այսուհետ նաև՝ կողմեր), մյուս կողմից, կնքեցին սույն քաղաքացիաիրավական պայմանագիրն այն մասին, որ քաղաքացին պարտավորվում է ուսումնառության ընթացքում անցնել զինվորական պատրաստություն և ուսումնառության ավարտից ու պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց հետո Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով անցնել կրտսեր սպայական կազմի պայմանագրային զինվորական ծառայություն (այսուհետ՝ ծառայություն)՝ դասակի հրամանատարի պաշտոնի համալրման զինվորական պատրաստություն անցած լինելու դեպքում՝ 2 տարի 3 ամիս ժամկետով, որում առաջին 3 ամիսը՝ շարքային կազմի պարտադիր զինծառայողի կարգավիճակով, իսկ բժշկական մասնագիտացում պահանջող պաշտոնների համալրման պատրաստություն անցած լինելու դեպքում՝ 1 տարի ժամկետով կլինիկական ռեզիդենտուրայում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով ուսումնառության և հետուսումնական 4 տարի ժամկետով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Քաղաքացու իրավունքներն են՝

2.1.1. բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ժամկետի ընթացքում ստանալ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում,

2.1.2. բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորել պետական բյուջեի միջոցների հաշվին՝ այն ուսումնական տարվանից սկսած, որի շրջանակներում կնքվել է սույն պայմանագիրը,

2.1.3. դասակի հրամանատարի պաշտոնի համալրման զինվորական պատրաստություն անցած լինելու դեպքում բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ավարտից ու պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց և շարքային կազմի պարտադիր զինծառայողի կարգավիճակով պատրաստություն անցնելուց հետո նախարարությունից պահանջելու իր հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու

պայմանագիր՝ իրեն նշանակելով ստացած զինվորական մասնագիտությանը համապատասխանող պաշտոնի և շնորհելով «լեյտենանտ» սպայական կոչում,

2.1.4. բժշկական մասնագիտացում պահանջող պաշտոնների համալրման պատրաստություն անցած լինելու դեպքում բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ավարտից ու պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց հետո նախարարությունից պահանջելու իր հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր՝ իրեն ուսումնառության գործուղելով կլինիկական ռեզիդենտուրա և դրա ավարտից հետո իրեն նշանակելով բժշկական մասնագիտացմանը համապատասխանող պաշտոնի և շնորհելով «լեյտենանտ» սպայական կոչում,

2.1.5. պայմանագրային զինվորական ծառայության պայմանագրի ժամկետը լրանալու հիմքով զինվորական ծառայությունից արձակվելուց հետո 2 տարվա ընթացքում Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրա ընդունվելու դեպքում սովորել անվճար՝ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքով,

2.1.6. սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում հրաժարվելու պայմանագրից:

2.2. Քաղաքացու պարտականություններն են՝

2.2.1. բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում նախարարության ռազմաուսումնական հաստատությունում անցնել զինվորական պատրաստություն՝ հաստատված ծրագրի համաձայն, ինչպես նաև յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո նախարարության ռազմաբժշկական հաստատությունում անցնել բժշկական հետազոտություն և փորձաքննություն,

2.2.2. զինվորական պատրաստություն անցնելու ժամանակ պահպանել ռազմաուսումնական հաստատության ներքին կարգ ու կանոնը,

2.2.3. բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ավարտից ու պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց և շարքային կազմի պարտադիր զինծառայողի կարգավիճակով պատրաստություն անցնելուց հետո նախարարության հետ կնքել պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր՝ 1.1-ին կետում նախատեսված համապատասխան ժամկետներով,

2.2.4. սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում պայմանագրից հրաժարվելու կամ բարձրագույն ուսումնական հաստատությունից կամ զինվորական պատրաստությունից ազատվելու և (կամ) հեռացվելու դեպքում, բացառությամբ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դեպքերի, 1 ամսվա ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատությանը միանվագ վճարել այդ հաստատության վճարովի համակարգում իր մասնագիտության գծով ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի կրկնապատիկը (այսուհետ՝ հրաժարագին)՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ներկայացված հաշվարկի հիման վրա:

2.3. Նախարարության իրավունքներն են՝

2.3.1. քաղաքացուց պահանջելու նախարարության ռազմաուսումնական հաստատությունում անցնել զինվորական պատրաստություն՝ հաստատված ծրագրի համաձայն, ինչպես նաև յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո նախարարության ռազմաբժշկական հաստատությունում անցնել բժշկական հետազոտություն և փորձաքննություն.

2.3.2. քաղաքացու կողմից զինվորական պատրաստության ծրագիրը չապահովելու դեպքում քաղաքացուն հեռացնելու զինվորական պատրաստությունից, ինչպես նաև նախարարության ռազմաբժշկական հաստատությունում բժշկական

հետազոտության և փորձաքննության արդյունքներով քաղաքացու՝ ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում քաղաքացուն ազատելու զինվորական պատրաստությունից.

2.3.3. սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում քաղաքացու կողմից պայմանագրից հրաժարվելու կամ բարձրագույն ուսումնական հաստատությունից կամ զինվորական պատրաստությունից անկախ պատճառներից ազատվելու և (կամ) հեռացվելու դեպքում վաղաժամկետ լուծելու պայմանագիրը և դադարեցնելու քաղաքացուն տրված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետումը:

2.4. Նախարարության պարտականություններն են՝

2.4.1. ապահովել քաղաքացու զինվորական պատրաստությունը՝ հաստատված ծրագրի համաձայն, ինչպես նաև յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո նախարարության ռազմաբժշկական հաստատությունում քաղաքացու բժշկական հետազոտությունը և փորձաքննությունը.

2.4.2. քաղաքացուն ապահովել զինվորական համազգեստով և զինվորական պատրաստության ներգրավման օրերին մեկանգամյա սննդով՝ համապատասխան ռազմաուսումնական հաստատության կուրսանտների համար նախատեսված կարգով.

2.4.3. նախարարության մասով ապահովել սույն պայմանագրի 2.1.1-ին, 2.1.3-րդ և 2.1.4-րդ կետերի կատարումը:

### **3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

3.1. Նախարարության կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները խախտելու դեպքում քաղաքացին իրավունք ունի իր խախտված իրավունքներն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարին կամ դատարան:

3.2. Սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում քաղաքացու կողմից պայմանագրից հրաժարվելու կամ բարձրագույն ուսումնական հաստատությունից կամ զինվորական պատրաստությունից անկախ պատճառներից ազատվելու և (կամ) հեռացվելու դեպքում քաղաքացին կորցնում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տրված տարկետումը և ենթակա է պարտադիր զինվորական ծառայության գորակոչի՝ օրենքով սահմանված կարգով:

3.3. Սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում քաղաքացու կողմից պայմանագրից հրաժարվելու կամ բարձրագույն ուսումնական հաստատությունից կամ զինվորական պատրաստությունից ազատվելու և (կամ) հեռացվելու դեպքում, բացառությամբ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դեպքերի, քաղաքացին պարտավոր է 1 ամսվա ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատությանը միանվագ վճարել սույն պայմանագրի 2.2.4-րդ կետում սահմանված հրաժարագինը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելու օրվանից և գործում է բարձրագույն ուսումնական հաստատությունում քաղաքացու ուսումնառության և (կամ) Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատությունում զինվորական պատրաստություն անցնելու ամբողջ ժամկետով:

4.2. Պայմանագիրը լուծվում է պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիման վրա կամ վաղաժամկետ՝ սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում քաղաքացու կողմից պայմանագրից հրաժարվելու կամ բարձրագույն

ուսումնական հաստատությունից կամ զինվորական պատրաստությունից անկախ պատճառներից ազատվելու և (կամ) հեռացվելու հիմքով:

4.3. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ: Պայմանագրի մեկ օրինակը տրվում է քաղաքացուն, իսկ մյուս օրինակը պահվում է նախարարությունում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՑՄԱՆՆԵՐԸ

### ՔԱՂԱՔԱՅԻ

-----  
(անվան ու հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)

-----  
(անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը)

-----  
(ստորագրությունը)

----- 20 թ.

### ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

-----  
(պաշտոնատար անձի կոչումը, անվան ու

-----  
հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)

-----  
(ստորագրությունը)

----- 20 թ.

Կ.Տ.

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ ԱՌԱՆՑ  
ԸՆԴՀԱՏՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ԱՐՑԱՒԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԼՊԱՏԱԿԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ  
ՏԱԼՈՒ ԵՎ ՏՐՎԱԾ ՏԱՐԿԵՏՈՒՄԸ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Սույն պայմաններով կարգավորվում են Արցախի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող Արցախի Հանրապետության քաղաքացիներին նպատակային ուսումնառության համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու, ինչպես նաև տրված տարկետումը դադարելու հետ կապված հարաբերությունները:

2. Արցախի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող, 18 տարին լրանալու օրվա դրությամբ հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառությունը չավարտած և հայտարարված համապատասխան գորակոչի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա Արցախի Հանրապետության քաղաքացիների քանակը հստակեցնելու նպատակով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը համապատասխանաբար մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը կամ նոյեմբերի 1-ը հարցում է կատարում Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական, ինչպես նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին:

3. Արցախի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող համապատասխան ուսումնական հաստատությունները Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հարցումը ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն են ներկայացնում տվյալ ուսումնական հաստատությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող, 18 տարին լրանալու օրվա դրությամբ համապատասխան կրթական ծրագրերով ուսումնառությունը չավարտած և հայտարարված գորակոչի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա Արցախի Հանրապետության քաղաքացիների անվանացուցակներ՝

դրանում նշելով քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, զինվորական կոմիսարիատը, համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության սկզբի և ավարտի օրը, ամիսը, տարեթիվը: Անվանացուցակների հետ միասին ներկայացվում են նաև քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի, դրանց բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի, իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողների մասով՝ նաև հիմնական հանրակրթական ծրագիր անցած լինելու ավարտական վկայականի պատճենները:

4. Օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորող, 18 տարին լրանալու օրվա դրությամբ հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառությունը չավարտած և հայտարարված գորակոչի շրջանակներում պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա Արցախի Հանրապետության քաղաքացիները դիմում են ներկայացնում Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարին՝ սույն պայմանների 5-րդ կետում նախատեսված ամփոփ անվանացուցակներում ընդգրկվելու համար: Դիմումին կից ներկայացվում են նաև քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի, դրանց բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը, ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ կրթական ծրագրի տեսակի և համապատասխան կրթական ծրագրով քաղաքացու ուսումնառության սկզբի և ավարտի ժամկետների վերաբերյալ տեղեկատվությամբ, իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողների մասով՝ նաև հիմնական հանրակրթական ծրագիր անցած լինելու ավարտական վկայականի պատճենը: Օտարերկրյա պետությունների համապատասխան ուսումնական հաստատությունների կողմից տրված փաստաթղթերը պետք է լինեն վավերացված՝ նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ:

5. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը ճշգրտում է ստացված անվանացուցակները և դիմումները, որի հիման վրա ըստ քաղաքացիների բնակության վայրերի զինվորական կոմիսարիատների և սույն պայմանների 2-րդ և 4-րդ կետերում նշված տեղեկությունների համաձայն կազմած քաղաքացիների ամփոփ անվանացուցակներն ու քաղաքացիների դիմումները և այլ փաստաթղթերը, մինչև յուրաքանչյուր տարվա համապատասխանաբար հունիսի 15-ը կամ դեկտեմբերի 15-ը, ուղարկում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

6. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունից անվանացուցակները, քաղաքացիների դիմումները և այլ փաստաթղթերը Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանման կողմից մինչև յուրաքանչյուր տարվա համապատասխանաբար հունիսի 30-ը կամ դեկտեմբերի 30-ը ուղարկվում են համապատասխան զինվորական կոմիսարիատներ՝ քաղաքացիների տարկետումն օրենքով սահմանված կարգով ձևակերպելու համար: Չինվորական կոմիսարիատները քաղաքացիների տարկետումը սահմանված կարգով ձևակերպում են մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան քաղաքացու 19 տարին լրանալու օրը:

7. Տրված տարկետման ժամկետի ընթացքում տարկետման իրավունքը դադարում է քաղաքացուն համապատասխան ուսումնական հաստատությունից անկախ պատճառներից ազատելու և (կամ) հեռացնելու դեպքում: Քաղաքացուն Արցախի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության համապատասխան

ուսումնական հաստատությունից ազատելու և (կամ) հեռացնելու մասին հրամանը՝ դրա տալու օրվանից հետո ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան ուսումնական հաստատության կողմից ներկայացվում է քաղաքացու զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Տարկետման իրավունքը դադարած քաղաքացուն տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրվում է ծանուցագիր՝ հայտարարված գորակոչի շրջանակներում գորակոչին մասնակցելու վերաբերյալ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019թ.

N 1015-Ն

ք. Ստեփանակերտ

**ԲԱՐՁՐԱԳՈՒՑՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ  
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ղ ո ղ մ է**:

1. Սահմանել բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ



**Վ Ա Ր Գ**  
**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**  
**ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ**  
**ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են Արցախի Հանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ քաղաքացիներ)՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) կնքած քաղաքացիների զինվորական պատրաստության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները: Սույն կարգի դրույթները տարածվում են նաև մինչև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքն ուժի մեջ մտնելը նախկին «Զինապարտության մասին» օրենքով սահմանված կարգով ուսումը շարունակելու կապակցությամբ տարկետում ստացած և նախկին «Զինվորական ծառայություն անցնելու մասին» օրենքով սահմանված կարգով ուսումնառության ընթացքում նախարարության հետ զինվորական պատրաստություն անցնելու մասին պայմանագիր կնքած քաղաքացիների զինվորական պատրաստության կազմակերպման և իրականացման հարաբերությունների վրա:

2. Զինվորական պատրաստության նպատակը պայմանագիր կնքած քաղաքացիներին հետագա զինվորական ծառայության համար անհրաժեշտ ռազմական գիտելիքներով ապահովելն է:

3. Զինվորական պատրաստությունը կազմակերպվում է՝

1) դասակի հրամանատարների պաշտոնների համալրման պատրաստությունը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում՝ մոտոհրաձգային, հրաձգային կամ հրետանային դասակների հրամանատարների պատրաստման ծրագրերով:

2) բժշկական մասնագիտացում պահանջող պաշտոնների համալրման պատրաստությունը՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետում՝ ռազմաբժշկական պատրաստության ծրագրերով:

4. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված զինվորական պատրաստության ժամկետը 2 տարի 6 ամիս է՝ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության 3-7-րդ կիսամյակների ընթացքում՝ համապատասխան ռազմաուսումնական հաստատության ղեկավարի կողմից հաստատված դասացուցակով, սակայն ոչ ավելի, քան շաբաթվա մեկ օրվա ընթացքում՝ 7 ժամ: Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված զինվորական պատրաստության ժամկետը 2 տարի 6 ամիս է՝ նախարարության առաջարկությամբ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի կողմից սահմանված կիսամյակների ընթացքում և օրերին:

5. Զինվորական պատրաստության ուսումնական ծրագրերը մշակվում և հաստատվում են նախարարության կողմից: Ուսումնական ծրագրերը ներառում են

նաև միջանկյալ ստուգարքները և ավարտական քննությունը: Ձինվորական պատրաստության ընթացքում քաղաքացիները հանձնում են միջանկյալ ստուգարքներ: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո քաղաքացիները նախարարության ռազմաբժշկական հաստատությունում անցնում են բժշկական հետազոտություն և փորձաքննություն:

6. Ձինվորական պատրաստությունն ավարտվում է ուսումնական ծրագրով նախատեսված նախարարության գորամասերում՝ մինչև 30 օր տևողությամբ ուսումնական հավաքներով, որից հետո քաղաքացիները հանձնում են զինվորական պատրաստության գծով ավարտական քննություններ:

7. Ձինվորական պատրաստության ընթացքում քաղաքացիներն ապահովվում են զինվորական համազգեստով, անհրաժեշտ ուսումնական նյութերով: Քաղաքացիների կողմից զինվորական պատրաստությանը մասնակցության տրանսպորտային ծախսերը չեն փոխհատուցվում: Ձինվորական պատրաստության ներգրավման օրերին քաղաքացիներն ապահովվում են մեկանգամյա սննդով՝ համապատասխան ռազմաուսումնական հաստատության կուրսանտների համար նախատեսված կարգով:

8. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 11-ի «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու կարգը սահմանելու մասին» N 1015-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո զինվորական պատրաստություն անցնող քաղաքացիների և նախարարության իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են քաղաքացու և նախարարության միջև Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 11-ի «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» N 1014-Ն որոշման համաձայն կնքված պայմանագրով:

9. Քաղաքացին զինվորական պատրաստությունից ազատվում է՝

1) իր հետ կնքած պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասին դիմում ներկայացնելու դեպքում:

2) նախարարության ռազմաբժշկական հաստատությունում բժշկական հետազոտության և փորձաքննության արդյունքներով ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում:

3) բարձրագույն ուսումնական հաստատությունից, անկախ պատճառներից, ազատվելու և (կամ) հեռացվելու դեպքում:

10. Քաղաքացին զինվորական պատրաստությունից հեռացվում է՝

1) մեկ ուսումնական տարվա ընթացքում զինվորական պատրաստության ծրագրից, անկախ պատճառներից, 32 ակադեմիական ժամից ավելի բացակայելու կամ սույն կարգի 6-րդ կետով նախատեսված ուսումնական հավաքին 3 օրացուցային օրվանից ավելի չմասնակցելու դեպքում:

2) զինվորական պատրաստություն անցնելու ժամանակ ռազմաուսումնական հաստատության ներքին կարգ ու կանոնը չպահպանելու (անկարգապահության) պատճառով:

3) զինվորական պատրաստության միջանկյալ ստուգարքների կամ ռազմական պատրաստության գծով ավարտական քննությունների արդյունքում անբավարար առաջադիմություն ցուցաբերելու դեպքում:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019թ.

N 1016-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 18 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ղ շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի «Միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգը հաստատելու մասին» N 18 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետի «գ» ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» ենթակետ.

«դ) միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի՝ նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքի գործարկման եզրակացության տրամադրման դիմումի և թերությունների վերացումից հետո էներգատեղակայանքի գործարկման եզրակացության տրամադրման դիմումի ձևերը՝ համաձայն թիվ 4 հավելվածի:».

2) որոշումը լրացնել նոր թիվ 4 հավելվածով՝ համաձայն N 1 հավելվածի.

3) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի՝

ա. 5-րդ և 6-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Գազի տեղակայանքների գործարկմանը պատրաստ լինելու դեպքում, դրանց սեփականատերը (լիազորված անձը) գրավոր դիմում է լիազոր մարմին՝ միաժամանակ ներկայացնելով գազամատակարարման տեխնիկական պայմանները (տեխնիկական առաջադրանքը): Դիմումը կարող է ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

6. Գազի տեղակայանքների սեփականատիրոջ (լիազորված անձի) դիմումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնի մասնագետ-տեսուչը (մասնագետ-տեսուչները) կատարում է (կատարում են) գազի տեղակայանքների տեխնիկական ստուգում (ուսումնասիրություն) և կազմում ակտ-կարգադրագիր, որում նշվում են ներկայացված փաստաթղթերի անվանումները, տեղադրված և հավաքակցված տեղակայանքների համապատասխանությունը նախագծին և տեխնիկական կանոնակարգերին: Գազի տեղակայանքների սեփականատերը (լիազորված անձը) մասնագետ-տեսուչին է տրամադրում գործարկման եզրակացություն տալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկով՝ համաձայն թիվ 2 հավելվածի, նախատեսված փաստաթղթերի պատճենները: Մասնագետ-տեսուչը փաստաթղթերի իսկությունը պարզելու նպատակով տեղում դրանք համեմատում է փաստաթղթերի բնօրինակների հետ: Ակտ-կարգադրագրի դրական եզրակացության հիման վրա, սույն կետում նշված ժամկետում, տրվում

է գագի տեղակայանքի գործարկման եզրակացությունը՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի N 18 որոշման թիվ 3 հավելվածի՝ թույլատրելով դրա գործարկումը:»,

բ. 8-րդ կետում «7» թիվը փոխարինել «հինգ աշխատանքային» բառերով,

գ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Ակտ-կարգադրագրում նշված թերությունների վերացման մասին գագի տեղակայանքների սեփականատիրոջ գրավոր դիմումից հետո լիազոր մարմնի մասնագետ-տեսուչը (մասնագետ-տեսուչները), թերությունների վերացումը հաստատելու և գործարկման եզրակացություն տալու նպատակով, երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարում է (կատարում են) գագի տեղակայանքների ուսումնասիրություն, և թերությունների վերացումը հաստատելու դեպքում տրվում է ենթագատեղակայանքի գործարկման եզրակացություն:».

4) որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

Հավելված N 1  
Արցախի Հանրապետության կառավարության  
2019 թվականի դեկտեմբերի 11-ի N 1016-Ն որոշման

«Հավելված 4  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության  
2007 թվականի հունվարի 30-ի N 18 որոշման

**Ձև N 1**

ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության  
աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության պետ

\_\_\_\_\_ին  
(անունը, ազգանունը)

Դիմող

Իրավաբանական անձ

\_\_\_\_\_ին  
(սեփականատիրոջ (լիազորված անձի) անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

\_\_\_\_\_ին  
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ԳԱԶԻ ՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ**

Խնդրում եմ տրամադրել \_\_\_\_\_ գազի տեղակայանքի  
նոր կառուցված/վերակառուցված

գործարկման եզրակացություն:

Գազի տեղակայանքի տեղադրման վայրը \_\_\_\_\_

Աշխատանքային ճնշումը \_\_\_\_\_ (կգ/սմ<sup>2</sup>)

Կից՝ ներկայացնում եմ գազամատակարարման տեխնիկական պայմանները (\_\_\_\_\_ էջ):

Դիմող \_\_\_\_\_ (ստորագրությունը) \_\_\_\_\_  
(սեփականատիրոջ/լիազորված անձի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.

Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական  
ենթակառուցվածքների նախարարության  
աշխատակազմի Էներգետիկայի պետական տեսչության պետ  
\_\_\_\_\_ -ին

(անունը, ազգանունը)

Դիմող

Իրավաբանական անձ

\_\_\_\_\_ (սեփականատիրոջ (լիազորված անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

\_\_\_\_\_ (իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՅՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԳԱԶԻ ՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ  
ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ**

Հայտնում եմ, որ վերացվել են Ձեր կողմից տրամադրված \_\_\_\_\_ 20 թ. N \_\_\_\_\_  
ակտ-կարգադրագրում նշված թերությունները:

Խնդրում եմ տրամադրել \_\_\_\_\_ գազի տեղակայանքի  
նոր կառուցված/վերակառուցված

գործարկման եզրակացություն:

Դիմող \_\_\_\_\_ (ստորագրությունը) \_\_\_\_\_ (սեփականատիրոջ/լիազորված անձի անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ 20 թ.

»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**Ց Ա Ն Կ**

**ՄԻՋԻՆ ՈՒ ԲԱՐՁՐ ԸՆՇՄԱՆ ԳԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ՝ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ  
ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԷՆԵՐԳԱՏԵՂԱԿԱՑԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

1. Գազի տեղակայանքների՝ գործարկմանը պատրաստ լինելու դեպքում դրանց սեփականատերը (լիազորված անձը) լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դիմում՝ դրանք տեխնիկական ստուգման (ուսումնասիրության) ենթարկելու մասին.

2) գազամատակարարման տեխնիկական պայմանները (տեխնիկական առաջադրանքը):

2. Գազի տեղակայանքների տեխնիկական ստուգման ժամանակ դրանց սեփականատերը (լիազորված անձը) մասնագետ-տեսուչին է տրամադրում՝

1) գազի տեղակայանքի շահագործման պատասխանատու անձի նշանակման մասին հրամանի կամ պատասխանատու անձի հետ կնքված պայմանագրի պատճենը.

2) գազի տեղակայանքների տեխնիկական նախագծի պատճենը՝ կազմված տեխնիկական պայմաններին (տեխնիկական առաջադրանքին) համապատասխան՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լիցենզավորված կազմակերպության կողմից.

3) հաշվեկշռային պատկանելության սահմանազատման մասին երկկողմ (մատակարար-բաժանորդ) վավերացված ակտի պատճենը.

4) գազատարի, գազի ճնշակային և կարգավորիչ կայանքների՝ տեխնիկական կանոնակարգերով սահմանված փորձարկումների արձանագրությունների պատճենները.

5) գազ սպառող տեխնոլոգիական սարքավորումների (կայսաներ, ջրատաքացուցիչներ, գազայրիչներ և այլն) տեխնիկական կանոնակարգերով սահմանված փորձարկումների արձանագրությունների պատճենները:

»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019թ.

N 1017-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԲԱՇԽՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ  
(ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ) ՄԱՍԻՆ

Համաձայն Հոդային օրենսգրքի 34-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի N 172 որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել Արցախի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարին, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարին՝ իրենց կողմից կատարվող աշխատանքների արդյունքում հողային ֆոնդի կազմում տեղի ունեցող փոփոխությունները (բազմամյա տնկարկների հիմնում, նոր հողերի իրացում, ոռոգվող հողերի նոր ելքեր, անտառների հիմնում և այլ փոփոխություններ) ներկայացնել Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, համապատասխան համայնքների ղեկավարներին և Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ՝ հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ**  
**ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՍԲ**

Արցախի Հանրապետության տարածքը, այդ թվում՝	հազար հեկտար, որից՝ ոռոգվող	
	1180,3168	14,6738
1) Արցախի Հանրապետության հողային ֆոնդն՝ ըստ նպատակային նշանակության		
ա. գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	602,3123	14,4338
վարելահողեր	148,1240	11,8962
բազմամյա տնկարկներ	9,6918	0,9061
խոտհարքներ	35,1763	
արոտներ	368,9050	0,8561
այլ հողատեսքեր	40,4152	0,7754
բ. բնակավայրերի հողեր, որից՝	27,8441	0,2400
տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	17,5261	0,2400
գ. արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	5,3125	
դ. էներգետիկայի, տրանսպորտի, կապի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	3,6544	
ե. հատուկ պահպանվող տարածքների հողեր	5,2301	
զ. հատուկ նշանակության հողեր	56,8978	
է. անտառային հողեր, որից՝	470,9710	
անտառ	263,2326	
թփուտ	163,8876	
խոտհարք	0,0060	
արոտ	22,0254	
այլ հողատեսքեր	21,8194	
ը. ջրային հողեր	5,7323	
թ. պահուստային հողեր	2,3623	
2) հողային ֆոնդն՝ ըստ սեփականության սուբյեկտների՝		
ա. քաղաքացիների	39,4711379	0,2281
բ. իրավաբանական անձանց	3,4367012	
գ. համայնքային	148,88142	0,6554
դ. պետական	957,287729	13,7902
է. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և Արցախի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց	0,5265	

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**  
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ**  
**ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2019թ.

N 1019-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 97  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ք ն շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի «Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 97 որոշմամբ հաստատված՝

1) թիվ 1 հավելվածի 9-րդ կետում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 2-րդ ենթակետը,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) նորմատիվ իրավական ակտերի նախագծերի պետական իրավական փորձաքննության ապահովումը.»,

գ. 5-րդ ենթակետում «օրենսդրական, գերատեսչական կամ տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը փոխարինել «նորմատիվ» բառով.

2) թիվ 1 հավելվածի 10-րդ կետի 1-ին ենթակետում՝

ա. «ա» պարբերությունում «ակտերի» բառից հետո լրացնել «նախագծերի» բառը, հանել «և պետական գրանցում» բառերը,

բ. ուժը կորցրած ճանաչել «գ» պարբերությունը,

գ. «ե» պարբերությունում «օրենքով սահմանված կարգով օրենսդրական, գերատեսչական և տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը փոխարինել «նորմատիվ» բառով,

դ. «զ» պարբերությունում «, դատական, գերատեսչական, տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը փոխարինել «և ենթաօրենսդրական նորմատիվ» բառերով.

3) թիվ 1 հավելվածի 13-րդ կետի 14-րդ ենթակետում «իր իրավասության սահմաններում ընդունում և օրենքով սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական ենթաօրենսդրական իրավական ակտեր, արձակում է հրամաններ» բառերը փոխարինել «օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտեր» բառերով.

4) թիվ 2 հավելվածի «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին կետի

ա. 1-ին ենթակետից հանել «և օրենսդրության կատարելագործման» բառերը,

- բ. 2-րդ ենթակետում «հրատարակման» բառից հետո լրացնել «և  
իրավական տեղեկատվական համակարգի» բառերը,  
գ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝  
«3) Օրենսդրության կատարելագործման բաժին»:  
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ին:

**«Հաստատում եմ»**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

11 դեկտեմբերի 2019թ.

N 1020-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 176  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Ոստիկանության բժշկական հաստատության գործունեության և ֆինանսավորման կարգը, ինչպես նաև այդ հաստատության բժշկական ծառայությունից օգտվող մարմինների (ծառայողների) ցանկը սահմանելու մասին» N 176 որոշման թիվ 2 հավելվածի ցանկի 3-րդ կետում՝ «կենսաթոշակառուները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողները» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

ԱՐՑ ԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«21» նոյեմբերի 2019թ.

N 316-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ  
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Արթուր Գասպարյանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ`

1.Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի նոյեմբերի 21-ին **«ատամնատեխնիկական»** գործունեության համար անհատ ձեռնարկատեր Արթուր Գասպարյանին տրված թիվ Ա-XX-000200 լիցենզիան:

2.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին`

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Արթուր Գասպարյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՅԱՆ

ԱՐՑ ԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» նոյեմբերի 2019թ.

N 317-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ

1.«ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Մանուկյան 9<sup>ա</sup>) բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզիա տալու վերաբերյալ հայտը բավարարել և տալ **«ատամնատեխնիկական»** գործունեություն իրականացնելու լիցենզիա, բժշկական օգնության և սպասարկման ձևը՝ **արտահիվանդանոցային:**

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա. ԲԱՂՅԱՆ

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«21» նոյեմբերի 2019թ.

N 318-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԼԻԼՖԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով.

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ**

1. «ԼԻԼՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Մանուկյան 13/48) հայտը բավարարել և տալ դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Ա.ԲԱՂՐՅԱՆ**

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«21» նոյեմբերի 2019թ.

N 319-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԼԻԼՖԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով.

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ**

1. «ԼԱԴ ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Մանուկյան 17/48) հայտը բավարարել և տալ դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Ա.ԲԱՂՅԱՆ**



**ԱՐՑ ԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«25» նոյեմբերի 2019թ.

N 322-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԱՐԵՎԻԿ» ԲՈՒԺՄԻԱՎՈՐՈՒՄ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ  
ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը և «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2019 թվականի նոյեմբերի 22-ի գրությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ**

1. «Արևիկ» բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերության (2019 թվականի փետրվարի 25-ին տրված N Կ-ԲՕ-000335 լիցենզիա) բժշկական օգնության և սպասարկման իրականացման վայրը՝ ԱՀ, քաղաք Ստեփանակերտ, Բաղրամյան 4 հասցեից վերափոխել ԱՀ, քաղաք Ստեփանակերտ, Մկրտչյան 4 հասցեի:

2.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի գործունեության իրականացման վայրի վերաբերյալ կատարված փոփոխության մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

**Ա.ԲԱՂՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

02 դեկտեմբերի 2019թ.

N 222

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ  
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՍԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության տեսակի լիցենզավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 2-ի N 346-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) «Հաղորդորան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՄՊՏՕ N00735 լիցենզիա և լիցենզիայի N00001, N00002 ներդիրներ.

2) ֆիզիկական անձ Էդիկ Դավիթի Սարգսյանին Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՕ N00736 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

3) անհատ ձեռնարկատեր Անդրեյ Նիկոլայի Գալստյանին Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՕ N00265 լիցենզիայի N00003 ներդիր.

4) ֆիզիկական անձ Կարեն Մերգեյի Սևումյանին Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՕ N00548 լիցենզիայի N00003 ներդիր.

5) ֆիզիկական անձ Վլադիմիր Էդիկի Ամիրխանյանին Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՕ N00653 լիցենզիայի N00002 ներդիր.

2. Դադարեցնել՝

1) **անհատ ձեռնարկատեր Արմեն Վոլոդիայի Բեգլարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՕ N00418 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

2) **ֆիզիկական անձ Սասուն Կարենի Աղաջանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՕ N00618 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

3) **անհատ ձեռնարկատեր Անդրեյ Նիկոլայի Գալստյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՕ N00265 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը.

4) **ֆիզիկական անձ Կարեն Մերգելի Սևումյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՕ N00548 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը.

5) **ֆիզիկական անձ Վլադիմիր Էդիկի Ամիրխանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՕ N00653 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

09 դեկտեմբերի 2019թ.

N 227

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ  
ԱԿՏՈՍՈՐԲԷՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՈՒՂԷՎՈՐԱՓՈՒՍԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 6-ի N347-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **անհատ ձեռնարկատեր Սերգեյ Արեգի Սարգսյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՄՊՏՕ N00737 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

2) **ֆիզիկական անձ Մարատ Ալեքսանդրի Աբրահամյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕ N00738 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

3) **ֆիզիկական անձ Արթուր Իվանի Ավանեսյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕ N00739 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

4) **ֆիզիկական անձ Արմեն Յուրիկի Աբրահամյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕ N00634 լիցենզիայի N00002 ներդիր:

5) **ֆիզիկական անձ Արմեն Հրայրի Սարգսյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕ N00647 լիցենզիայի N00003 ներդիր.

6) **անհատ ձեռնարկատեր Աբրահամ Գրիգորիի Պողոսյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական

տական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕ N00684 լիցենզիայի N00002 ներդիր:

## **2.Դադարեցնել`**

1) **Ֆիզիկական անձ Արսյոմ Առստամի Ավետիսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության, 02.12.2019 թվականին տրված ՏՕ N00456 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

2) **Ֆիզիկական անձ Արմեն Յուրիկի Աբրահամյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության, 20.04.2018 թվականին տրված ՏՕ N00634 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը.

3) **Ֆիզիկական անձ Արմեն Հրայրի Սարգսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության, 14.06.2018 թվականին տրված ՏՕ N00647 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը.

4) **անհատ ձեռնարկատեր Աբրահամ Գրիգորիի Պողոսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության, 17.10.2018 թվականին տրված ՏՕ N00684 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ  
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի դեկտեմբերի 12-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի  
N128-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 11-Ն

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» ընդունելու մասին» N 128-Ն հրամանը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական բաժնի պետ Ա. Թովմասյանին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«12» դեկտեմբերի 2019 թվական  
ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ  
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի դեկտեմբերի 12-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 12-Ն

**ՀՐԱՄԱՆ**

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշը՝ «Մեծանուն հայեր» շարքից «ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի ծննդյան 90-ամյակը» թեմայով մեկ նամականիշ՝ համաձայն հավելվածի:

2. Գործողության մեջ դնել՝ «Մեծանուն հայեր» շարքից «ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի ծննդյան 90-ամյակը» թեմայով մեկ նամականիշ՝ սահմանելով համապատասխանաբար անվանագինը՝ 350 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 1000 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«12» դեկտեմբերի 2019 թվական  
ք.Ստեփանակերտ

Հավելված  
Արցախի Հանրապետության  
Էկոնոմիկայի և արտադրական  
ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. դեկտեմբերի 12-ի N 12-Ն հրամանի





**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ  
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի դեկտեմբերի 12-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 13-Ն

**ՀՐԱՄԱՆ**

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝ «Արցախի թռչուններ» շարքից «Սրնգահավ», «Մեղվակեր», «Մեծ երաշտահավ» և «Խայտաբղետ քարակեռնեխ» թեմաներով մեկական նամականիշ՝ համաձայն NNNN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Գործողության մեջ դնել՝ «Արցախի թռչուններ» շարքից «Սրնգահավ», «Մեղվակեր», «Մեծ երաշտահավ» և «Խայտաբղետ քարակեռնեխ» թեմաներով մեկական նամականիշ՝ սահմանելով համապատասխանաբար անվանագինը՝ 120 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 22 500 հատ, անվանագինը՝ 230 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 15 000 հատ, անվանագինը՝ 200 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 15 000 հատ, անվանագինը՝ 70 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 22 500 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«12» դեկտեմբերի 2019 թվական  
ք.Ստեփանակերտ

Հավելված N1  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի  
և արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. դեկտեմբերի 12-ի N 13-Ն հրամանի



Հավելված N2  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. դեկտեմբերի 12-ի N 13-Ն հրամանի



Հավելված N3  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. դեկտեմբերի 12-ի N 13-Ն հրամանի



Հավելված N4  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. դեկտեմբերի 12-ի N 13-Ն հրամանի

